ԵԱՀԿ
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ԼՐԱՏՈՒ

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ

No. 10 դեկտեմբեր 2014

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

ԵԱՀԿ-ի ներգրավվածությունը երիտասարդների մասնակցության խթանման տարբեր բնագավառներում:

Մոդել ԵԱՀԿ համաժողով

Մոտ 60 երիտասարդ «դեսպաններ» գործնականում կիրառեցին իրենց հրապարակային խոսքի, միջազգային հարաբերությունների և բանակցային հմտությունները Մոդել ԵԱՀԿ համաժողովում, որը կրկնօրինակում է ԵԱՀԿ հիմնական որոշում ընդունող մարմինը՝ Մշտական Խորհուրդը: Մասնակիցները ջանասիրաբար փորձում էին պաշտպանել ազգային փոքրամասնությունների և ինքնորոշվող ազգերի իրավունքների մասին հորինված հակամարտության վերաբերյալ իրենց տեսակետները:

Ուսանողների բանավեճ

ԵԱՀԿ-ն շարունակեց իր աջակցությունը «Ջինիշյան հիշատակի հիմնադրամ»-ին Հայաստանի վեց մարզերի համալսարանների ուսանողների միջև թրաֆիքինգի հարցում տղամարդկանց, կանանց և երեխաների խոցելիության թեմայով ազգային բանավեճի մրցույթ կազմակերպելու հարցում: Նոյեմբերին ավելի քան 40 ուսանողներ հավաքվեցին Երևանում՝բանավիճելու, հրապարակային խոսքի և հետազոտական հմտությունների հարցերով մրցելու նպատակով:

Հակակոռուպցիոն կրթություն

Քսանհինգ երիտասարդներ սովորեցին, թե որն է հետաքննչական լրագրությունը, ֆոտոլրագրությունը, մասնակցեցին ինտերակտիվ խաղերին և բանավեճերին՝ ԵԱՀԿ աջակցությամբ «Ապագան քոնն է» ՀԿ-ի կողմից հակակոռուպցիոն թեմայով կազմակերպված քառօրյա աշխատաժողովի ընթացքում: Նույն շրջանակներում Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից անցկացվեց բարեվարքության և արդյունավետ կառավարման թեմայով հնգօրյա ուսուցում՝ Հայաստանի տարբեր բուհերի երիտասարդ իրավաբանների և ուսանողների համար:

Ազգային փոքրամասնությունների երիտասարդական ճամբար

Ազգային փոքրամասնությունների երիտասարդական ճամբարում հավաքվեցին տարբեր էթնիկական ծագմամբ 10-19 տարեկան 35 երիտասարդներ: «Համաշխարհային անկախ երիտասարդական միություն» ՀԿ-ի կողմից ԵԱՀԿ աջակցությամբ կազմակերպված նախաձեռնության նպատակն էր խթանել միջմշակութային երկխոսությունը և համագործակցությունը հայ հասակակիցների հետ՝ մարդու իրավունքների ուսուցման, կամավորության սկզբունքների և մշակույթներին ծանոթացնելու միջոցով:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

Քրեակատարողական համակարգի բարեփոխում

Մարդու իրավունքների օրվա առթիվ Արմավիրի նորաբաց քրեակատարողական հիմնարկում ԵԱՀԿ աջակցությամբ բացվեց գեղարվեստական ցուցահանդես, որի նպատակն էր ընդգծել դատապարտյալների վերականգման և հասարակության մեջ վերինտեգրման անհրաժեշտությունը: «Սահմանային իրականություն» խորագրով ցուցահանդեսում ներկայացված էին նկարիչ Սամվել Սաղաթելյանի և Սևանի, Կոշի ու Աբովյանի քրեակատարողական հիմնարկների դատապարտյալների աշխատանքները:

ԵԱՀԿ աջակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակին կից Խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհրդի անդամներն իրականացրեցին մշտադիտարկման այցեր Հայաստանի քրեակատարողական և այլ փակ հիմնարկներ: Խմբում ընդգրկված էին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և ՄԻՊ-ի աշխատակազմի անդամներ: Նրանց մշտադիտարկման զեկույցը պարունակում է ազատազրկված անձանց նկատմամբ վերաբերմունքի, բժշկական օգնության և պահման պայմանների վերաբերյալ գործնական առաջարկություններ՝ համապատասխան պետական գերատեսչություններին:

2014 թվականի մայիս-հուլիս ամիսներին Երևանում և Հայաստանի մարզերում գրասենյակի աջակցությամբ կազմակերպված աշխատաժողովների հիմնական նպատակն էր ապահովել անչափահաս օրինախախտների հարցերով զբաղվող տարբեր պետական և ոչ պետական հիմնարկների միջև ավելի արդյունավետ համագործակցությունը: «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից նախաձեռնած քննարկումները ուղղված էին Հայաստանում անչափահաս օրինախախտներին տրամադրվող բոլոր սոցիալական ծառայությունների քարտեզագրմանը և նրանց ներգրավմանը բարեփոխումներում: ԵԱՀԿ-ի կողմից կազմակերպվեց նաև աշխատաժողով՝ Եվրոպական քրեական իրավունքում երեխաներին առնչվող արդարադատության չափորոշիչների վերաբերյալ:

Տեղական ժողովրդավարության խթանում

ԵԱՀԿ համագործակցեց ՀՀ արդարադատության և ՀՀ տարածքային կառավարման նախարարությունների և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ՝ տեղական հանրաքվեի նոր հայեցակարգի և օրենքի նախագիծ մշակելու ուղղությամբ: Տեղական հանրաքվեն կարևոր ժողովրդավարական գործիք է, որը թույլ է տալիս քաղաքացիների անմիջական մասնակցություն տեղական կարևորություն ունեցող հարցերին՝ քվեարկության միջոցով: «Տեղական հանրաքվեի մասին» գործող ՀՀ օրենքը չի ապահովում համապատասխան համակարգ՝ քվեարկության միջոցով տեղական մակարդակում որոշումներ կայացնելու համար: ԵԱՀԿ աջակցությամբ կազմակերպվեց ուսայց Շվեյցարիա և Գերմանիա՝ պետական պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության համար՝ տեղական հանրաքվեի մասին օրենքների գործնական կիրառությանը ծանոթանալու նպատակով:

Երկխոսություն բնապահպանական հարցերով

ԵԱՀԿ սատարել է ՀՀ բնապահպանության նախարարության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև երկխոսությանը՝ բնապահպանական տարբեր հարցերով: Բնապահպանները կարևորել են մտահոգության արժանի երկու ոլորտներ՝ հանքարդյունաբերություն և հիդրոկայաններ: Երևանի պետական համալսարանի կայուն զարգացման կենտրոնը, ինչպես նաև «Տնտեսահիրավական վերլուծությունների կենտրոն» ՀԿ-ն՝ Օրհուսի կենտրոնների միջոցով, ԵԱՀԿ աջակցությամբ, անցկացրեցին մի շարք դասընթացներ, աշխատաժողովներ, ինչպես նաև ուսումնասիրություններ, որոնք պարունակում էին առաջարկություններ հիմնականում բնապահպանական արդյունավետ կառավարումը և բնապահպանական արդարադատությունը կիրառելու մասին:

ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

Միջազգային աշխատաժողով ԵԱՀԿ վարքի կանոնակարգի վերաբերյալ

ԵԱՀԿ և ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ ՆԱՏՕ-ի բարեվարքության ամրապնդման ծրագրի հետ գործակցությամբ, կազմակերպեց միջազգային աշխատաժողով՝ ԵԱՀԿ վարքի կանոնակարգի ռազմաքաղաքական խնդիրների վերաբերյալ Երևանում՝ հոկտեմբերի 16 -17-ը: Մասնակիցները փոխանակեցին Կանոնակարգի պարտավորությունների, անվտանգության ոլորտի կառավարման և բարեփոխումների լավագույն գործելակերպի, զինված ուժերում մարդու իրավունքների, անվտանգության ոլորտի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ու ՆԱՏՕ-ի և ԵԱՀԿ-ի պարտավորությունների արդյունավետ համատեղման վերաբերյալ իրենց գիտելիքը և փորձը: Կանոնակարգը ԵԱՀԿ եզակի գործիքներից է, որը խթանում է անվտանգության համագործակցային և համակողմանի բնույթը և օգնում է երկրներին մշակելու ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մեխանիզմներ: ԵԱՀԿ և ՀՀ պաշտպանության նախարարությունը դեկտեմբերին ստորագրեցին նաև 2015 թ. համագործակցության ծրագիրը:

Գործընկերություն ընտանեկան բռնության ոլորտում

ԵԱՀԿ օգնեց «Սոցիալական արդարություն» ՀԿ-ին մշակելու և խթանելու ոստիկանության և այլ շահառուների միջև ընտանեկան բռնության արդյունավետ կանխարգելման և արձագանքի գործընկերության մոդելը: Այս փորձնական ծրագիրն իրականացվեց Երևանի Քանաքեռ-Զեյթունի, Ավանի և Նոր Նորքի համայնքներում և Վանաձորում: Համայնքային մակարդակում ընտանեկան բռնության դեպքերի արձագանքման երեք իրատեսական մոդելները մշակվել էին փորձնական համայնքներում անցկացված ավելի քան 70 հանդիպումների և աշխատաժողովների, ինչպես նաև ընտանեկան բռնության դեպքերին տարբեր կառույցների արձագանքման մոդելների միջազգային լավագույն գործելակերպի վերլուծության հիման վրա: Ծրագրի թիմի կողմից ներկայացված առաջարկությունների թվում էին ընտանեկան բռնության ոլորտի օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը, այդ ոլորտում ոստիկանների գործառույթների ընդլայնումը, այդ նպատակի համար նշանակված ոստիկանների վերապատրաստումը, համապատասխան ձեռնարկների և ուղեցույցների մշակումը:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Մարդու իրավունքները զինված ուժերում

Սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի երեք մարզերում «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ն՝ ԵԱՀԿ աջակցությամբ, կազմակերպեց վերապատրաստողների վեց քառօրյա դասընթացներ մարդու իրավունքների պաշտպանության թեմայով Հայաստանի զինված ուժերի անձնակազմի համար: Դասընթացների նպատակն էր ամրապնդել մարդու իրավունքների պաշտպանությունը զինված ուժերում: Ուսուցման մեթոդաբանությունը հիմված էր ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ձեռնարկի և գրասենյակի կողմից մշակված ուսուցողական ուղեցույցի վրա:

Քրեակատարողական համակարգի լուսաբանում

Երևանի և մարզային լրատվամիջոցներից մոտ 15 լրագրողներ և օպերատորներ աշխատաժողովի ընթացքում քննարկեցին քրեակատարողական հիմնարկներում կամ ազատազրկման վայրերում գտնվող անձանց վերաբերյալ տեղեկատվության ճշգրիտ լուսաբանման կանոնները: Առանձնահատուկ ուշադրության արժանացան լրատվամիջոցներում անչափահասների կամ ցմահ դատապարտվածների հարցերի լուսաբանման լրագրողական վարքականոնները: Աշխատաժողովը կազմակերպվել էր Հայաստանի Հելսինկյան կոմիտեի կողմից՝ ԵԱՀԿ աջակցությամբ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ/ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Բնապահպանական կրթության ցանց

Նոյեմբերի 18-ին ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեյ Սորոկինը ստորագրեց Բնապահպանական կրթության ցանցի վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրը: Հուշագիրը ստեղծելու է հարթակ՝ բոլոր դպրոցների և համայնքների մակարդակում բնապահպանական կրթության խթանմանն ու ապահովմանն ուղղված Հայաստանի կառավարության ջանքերին սատարելու համար: Նախաձեռնությամբ խթանվելու է 15 ՀԿ-ների և օժանդակություն ցուցաբերող չորս միջազգային կազմակերպությունների, ներառյալ ԵԱՀԿ-ի միջև համագործակցությունը:

Զեկույց թվային հեռարձակման մասին

ԵԱՀԿ աջակցությամբ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի կողմից պատրաստված զեկույցում վերլուծված է անալոգայինից թվային հեռարձակման անցնելու գործընթացը, որը տեղի է ունենալու Հայաստանում 2015 թվականի հուլիսի 1-ից: Այն անդրադառնում է անցմանն առնչվող իրավական, տեխնիկական և սոցիալական խնդիրներին:

Վճռաբեկ դատարանի որոշումների ժողովածու

Հոկտեմբերի 10-ին ԵԱՀԿ-ն՝ Վճռաբեկ դատարանի հետ համագործակցությամբ, կազմակերպեց Վճռաբեկ դատարանի որոշումների և դրանց մեկնաբանությունների հավաքածուների շնորհանդեսը: Ժողովածուների նպատակն է երաշխավորել օրենքի միասնական կիրառությունը և նպաստել դատական բարեփոխումներին Հայաստանում: Փորձագիտական խմբի 2013 թվականի Քրեական պալատի 54 որոշումների հինգերորդ հատորը և գիտագործնական մեկնաբանությունների երկրորդ հատորը պատրաստվել է որպես տեղեկատվական ձեռնարկ դատավորների և իրավաբանների համար:

Սոցիալական մեդիայի օգտագործման ուսումնասիրություն

ԵԱՀԿ աջակցել է հայաստանյան լրագրողների կողմից սոցիալական մեդիայից տեղեկատվության օգտագործման վերաբերյալ ուսումնասիրության պատրաստմանը: Հայաստանի «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի կողմից հեղինակած ուսումնասիրության մեջ ներառված են հեռուստատեսության, ռադիոի և առցանց լրատվամիջոցների 100 մեդիա մասնագետների հետ անցկացված հարցազրույցները, ինչպես նաև ինը հիմնական լրատվամիջոցների, ներառյալ՝ հինգ առցանց և մեկ տպագիր, երեք հեռուստաալիքների վեց ծրագրերի մշտադիտարկման արդյունքները:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) գործում է հանուն իր 57 մասնակից պետությունների կայունության, բարօրության և ժողովրդավարության՝ համընդհանուր արժեքների շուրջ քաղաքական երկխոսության և գործնական աշխատանքների միջոցով՝ հետամուտ բարելավմանը:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը հիմնադրվել է 2000 թվականին՝ օժանդակելու Հայաստանին ԵԱՀԿ առջև ստանձնած իր պարտավորությունների կատարմանը անվտանգության բոլոր երեք ուղղություններով՝ ռազմաքաղաքական, տնտեսական և բնապահպանական և մարդու իրավունքներ:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ՝ Սունդուկյան 64/1, հեռ.. (00 374 10) 229610/11/12
էլ.փոստ՝ yerevan-am@osce.org, կայքէջ՝ http://www.osce.org/yerevan